ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԸ ԿՍՏԵՂԾԻ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՂ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ

15.01.2020 15:25

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի 2020 թվականի հունվարի 14-ի նիստում քննարկվել է փաստաբանների մասնագիտական գործունեության հետ կապված խոչընդոտները, ինչպես նաև փաստաբաններին սպառնալու և վիրավորելու դեպքերը կանխելու/վերացնելու հարցը:

Խորհրդի անդամներն արձանագրել են, որ փաստաբանների մասնագիտական գործունեության խոչընդոտման դեպքերը շարունակվում են և հաճախ ուղեկցվում են փաստաբանների նկատմամբ վիրավորանքներով, հայհոյանքներով և սպառնալիքներով:

Խորհրդի նախագահը տեղեկացրել է, որ այդ հարցերով բազմիցս դիմել են իրավասու պաշտոնատար անձանց, այդ թվում առաջարկել են քրեականացնել փաստաբանին մասնագիտական գործունեության առնչությամբ վիրավորելու արարքը, սակայն առ այսօր խնդիրը չի լուծվել:

Խորհրդի անդամների առաջարկով Փաստաբանների պալատի նախագահը կստեղծի աշխատանքային խումբ՝ խորհրդի անդամ Գայանե Դեմիրչյանի համակարգման ներքո, վերջին ժամանակահատվածում փաստաբանների մասնագիտական գործունեությունը խոչընդոտող, ինչպես նաև փաստաբաններին սպառնալու և վիրավորելու դեպքերն արձանագրելու և խորհրդին ներկայացնելու նպատակով:

Հայաստանի Հանրապետության

փաստաբանների պալատի

հանրային կապերի ծառայություն

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" &&

parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })